Նախիջեւանը եւ Զուղայի շրջանը, ուրիշ խօսքով՝ Երասխի ձախ ափին ընկնող դաշտային եւ լեռնային երկրամասերը, որ մօտաւորապէս համապատասխանում են այսօրուան Նախիջեւանի «հանրապետութեան» գրաւած տարածութեան:

Եւ յայտնի է արդէն, որ հին Մարաստանը (Մեդիան), որի հոչակաւոր կեդրոնն էր Եկբատան (այսօրուան Համադանը), տարածւում էր ներկայ Պարսկաստանի արեւմտեան երկայնքի վրայ, երկարաձգուելով դէպի հիւսիս, մինչեւ Երասխի եզերքը: Այսօրուան պարսից Ատրբպատականը հին Մարաստանի կարեւորագոյն մասերից մէկն էր կազմում:

Ուրիշ խօսքով՝ Հին Մարաստան սահմանակից էր Հայաստանին, Այրարատեան դաշտին: Այնտեղից է ահա, որ բազմաթիւ մարեր են բերւում եւ Մասիսի ստորոտներում բնակեցւում, մինչեւ Գողթան գաւառ: Իսկ որ դանդաղ ժամանակներ եւ յատկապէս Տիգրան Մեծի օրով օտարազգի դաղթական բազմութիւններ բերուել եւ բնակեցուել են Հայաստանում, պատմական փաստ է արդէն: Մովսէս Խորենացու պահած վերոյիշեալ առասպելախառն պատմութիւնը ոչ այլ ինչ է, եթէ մի մասնակի եւ հեռաւոր արձագանգ՝ նման մի դէպքի: Այդ պատմութիւնը դերծ լինել չէր կարող, ի հարկէ, ժամանակավրէպներից եւ անունների շփոթութիւնից:

Մի քանի դարեր յետոյ անգամ, տեսնում ենք, Հայաստանի այդ վայրերը շարունակում են կրել «Մարաց աշխարհ» անունը, թէեւ անտարակոյս է որ եկուոր տարրը ժամանակի ընթացքում եթէ ոչ բոլորովին, զգալիօրէն ձուլուել էր բնիկ տարրի մէջ, հայացել: Բայց եւ այնպէս, դեռ եւս հինգերորդ դարում — թերեւս աւելի եւս երկար ժամանակ — յատկապէս Գողթան շրջանի ժողովուրդը պահել էր իր ցեղական-լեզուական շատ առանձնայատկութիւնները:

Կորիւնի հաղորդած տեղեկութիւնները «խուժուդուժ Մարաց» եւ նրանց «սատանայական բարուց», այլ եւ «դժուարամատոյց լեզուի» մասին՝ անշուշտ այդ ձեւով եւ բացատրելու է: Նոյնն է նաեւ նրանց ամուր կառչած լինելու պարագան՝ հին կրօնին: Գուցէ թէ, վերջապէս, Գողթան եւ կամ այժմու Ագուլիսի ժողովրդեան՝ զոկերի՝ իսկապէ՛ս որ «դժուարամատոյց լեզուն», լինելով հանդերձ հայկական բարբառներից մէկը, իր վրայ դեռ շարունակում է եկուոր տարրի լեզուի հեռաւոր ազդեցութիւնը:

* * *

Ազաթանգեղոսի գրուածքը, ասացինք, Հայոց հեթանոսական կրօնի պատմութեան ամենագլխաւոր աղբիւրն է:

Հեղինակը նկարագրելով քրիստոնէութեան վերջնական մուտքը Հայաստան, եւ միեւնոյն ժամանակ Գրիգոր Լուսաւորչի ու Տրդատ Թագաւորի կողմից յարուցուած հալածանքը հին կրօնի դէմ, առաջ է բերում նաեւ վերջինիս գլխաւոր տարրերը: Միեւնոյն ժամանակ, մէկեւկէս դարու հնութիւն ներկայացնող կրօնական-եկեղեցական դէպքեր նկարագրելով՝ գրուածքը պարունակում է քրիստոնէական մի շարք լեգենդներ, որոնք անտարակոյս կենդանի էին հինգերորդ դարու Հայոց մէջ: Այստեղ մենք առաջ կը բերենք թէ մէկ եւ թէ միւս տեսակի կարեւորագոյն նիւթերը: Ինչ խօսք, որ այդ բոլորը եւս հեղինակի աչքին պատմական իրողութիւններ սեպուած են:

Ագաթանգեղոսի պատմութեան երկու գլխաւոր հերոսների՝ Գրիգոր Լուսաւորչի եւ Տրդատ Թագաւորի անուանց շուրջը հիւսուած ժողովրդական լեգենդներից եւ առասպելներից յիշատակենք հետեւեալները: Նախ՝ Տրդատի մասին:

Տրդատի արտաքին նկարագրութիւնն իսկ, Ագաթանգեղոսի գրչի տակ, իր մի քանի գծերով առասպելականի բացորոշ կնիքն է կրում իր վրայ: Ինքը հեղինակն իսկ շեշտում է այդ գիծը, հետեւեալ բառերով.— «Վասն այսորիկ պատշաճեցան բանքս այս ի բանս կարգի առակաց, թէ իբրեւ զսէգն Տրդատ որ սիգալովն աւերեաց զթումբս գետոց, եւ ցամաքեցոյց իսկ ի սիգալ իւրում զյորձանս ծովուց»:

Եթէ շարունակութիւնը մի կողմը թողնելու լինինք իսկ, որի մասին անմիջապէս խօսք կ՝անենք, պարզ է վերոյիշեալից յամենայն դէպս, որ Տրդատին վերագրուած վիպական այդ յատկանիշները Ագաթանգեղոս ժողովրդական առասպելներից է քաղում, ի՛ր իսկ ա-